ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.04.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/98

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.04.2021թ. թիվ 01.1/26-1/5702-2021 գրությամբ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը ՀՀ ազգային անվտանգության ծառայության 13.04.2021թ. թիվ 20/346 գրության հիման վրա 15.04.2021թ. թիվ 01.1/26-1/5702-2021 գրությամբ նախաձեռնել է «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/98 ընթացակարգի շրջանակներում 23.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) 13.04.2021թ. թիվ 20/346 գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ Ձեզ եմ ներկայացնում ՀՀ ազգային անվտանգության ծառայության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով 23.03.2021թ. ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ2 ծածկագրով հայտարարված գնանշման հարցման մասնակցի՝ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/98 ընթացակարգի շրջանակներում 23.04.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

<u>4. ՍՑ-ՆԳ-2021/98 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/98 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն բանակցություններին չի մասնակցել՝ հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության կողմից համապատասխան չափաբաժինների մասով նախկին ներկայացրած գնային առաջարկները հիմք ընդունելու վերաբերյալ:

3. Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընկերության կողմից 07.04.2021թ. ներկայացված գրությունն այն մասին, որ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ2» ծածկագրով մրցույթի թիվ 4, 5, 6, 7, 10, 36, 45, 52, 56, 60, 61, 65, 66, 67, 70, 76, 78, 80, 81, 82 և 85 չափաբաժիններում ներառված ապրանքների համար իր կողմից ներկայացվել են միավորի գներ, որոնցով հնարավոր չէ մատակարարման իրականացումը, ուստի հրաժարվում է հետագա մասնակցությունից, որոշում է կայացրել է Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

4. «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն ՀՀ ազգային անվտանգության ծառայությանն ուղղված 07.04.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ես՝ Դավիթ Աբրահամյանս մասնակցել եմ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ2 (4, 5, 6, 7, 10, 36, 45, 52, 56, 60, 61, 65, 66, 67, 70, 76, 78, 80, 81, 82, 85, չափաբաժիններին) ծածկագրով պահեստամասերի ձեռքբերման գնման ընթացակարգերին: Սակայն, գնային առաջարկի մեջ վրիպակի պատճառով տեղի է ունեցել ոչ միտումնավոր տեխնիկական անճշտություն, գնային առաջարկների 3-րդ և 5-րդ սյունակներում նշվել է ապրանքների մեկ միավորի գինը ամեն չափաբաժնի համար, որը օրենքից ելնելով հնարավոր չէ ուղղել, իսկ պայմանագիրը կատարել տվյալ գներով անհնար է:

Վերոգրյալով պայմանավորված ստիպված հրաժարվում եմ գնման գործընթացի հետագա մասնակցությունից և խնդրում եմ հանձնաժողովին հաշվի չառնել իմ կողմից ներկայացված գնային առաջարկը և բացառել այն»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 15.04.2021թ. թիվ 01.1/26-1/5702-2021

գրությունը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության 13.04.2021թ. թիվ 20/346 գրությունը՝ կից փաստաթղթերով, ինչպես նաև «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ի գրությունը և գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

<u>գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:</u>

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իր կարիքների համար կազմակերպվել է «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.04.2021թ. նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Էլիտ Ալիանս»

ՍՊԸ-ն բանակցություններին չի մասնակցել՝ հանձնաժողովը որոշում է կայացրել Ընկերության կողմից համապատասխան չափաբաժինների մասով նախկին ներկայացրած գնային առաջարկները հիմք ընդունելու վերաբերյալ:

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Ընկերության կողմից 07.04.2021թ. ներկայացված գրությունն այն մասին, որ «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ2» ծածկագրով մրցույթի թիվ 4, 5, 6, 7, 10, 36, 45, 52, 56, 60, 61, 65, 66, 67, 70, 76, 78, 80, 81, 82 և 85 չափաբաժիններում ներառված ապրանքների համար իր կողմից ներկայացվել են միավորի գներ, որոնցով հնարավոր չէ մատակարարման իրականացումը, ուստի հրաժարվում է հետագա մասնակցությունից, որոշում է կայացրել է Ընկերության հայտը մերժելու վերաբերյալ:

«Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն ՀՀ ազգային անվտանգության ծառայությանն ուղղված 07.04.2021թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ես՝ Դավիթ Աբրահամյանս մասնակցել եմ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ա/ՄԱՍԵՐ2 (4, 5, 6, 7, 10, 36, 45, 52, 56, 60, 61, 65, 66, 67, 70, 76, 78, 80, 81, 82, 85, չափաբաժիններին) ծածկագրով պահեստամասերի ձեռքբերման գնման ընթացակարգերին: Սակայն, գնային առաջարկի մեջ վրիպակի պատճառով տեղի է ունեցել ոչ միտումնավոր տեխնիկական անճշտություն, գնային առաջարկների 3-րդ և 5-րդ սյունակներում նշվել է ապրանքների մեկ միավորի գինը ամեն չափաբաժնի համար, որը օրենքից ելնելով հնարավոր չէ ուղղել, իսկ պայմանագիրը կատարել տվյալ գներով անհնար է:

<u>Վերոգրյալով պայմանավորված ստիպված հրաժարվում եմ գնման գործընթացի հետագա մասնակցությունից և խնդրում եմ հանձնաժողովին հաշվի չառնել իմ կողմից ներկայացված գնային առաջարկը և բացառել այն»:</u>

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Ընթացակարգի շրջանակներում ներկայացված հիմքերը, դրանք համադրելով գործում առկա ապացույցների հետ՝ արձանագրում եմ, որ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված

խախտում, ***<u>քանի որ Ընթացակարգի շրջանակներում հայտերը բացվելուց հետո «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ն Պատվիրատուին ուղղված 07.04.2021թ. գրությամբ հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից և խնդրել է հաշվի չառնել իր կողմից ներկայացված գնային առաջարկը և բացառել այն:</u>***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը որոշում է կայացնում մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 15.04.2021թ. թիվ 01.1/26-1/5702-2021 գրությամբ «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Էլիտ Ալիանս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**